ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ԱԼՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ալվանքցիներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ալվանք բնակավայրի օրվա կապակցությամբ: Տարիների ընթացքում ձեր միասնականությամբ և նախաձեռնություններով դուք շարունակել եք զարգացնել և ապրեցնել գյուղը՝ դարձնելով այն ավելի բարեկարգ, կենսունակ և հույսով լցված:

Առաջին հերթին շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ Ալվանքի յուրաքանչյուր բնակչի, ամենօրյա աշխատանք ծավալելու և նվիրումի համար:

Վստահ եմ, որ միասին կարող ենք ապահովել Ալվանքի կայուն առաջընթացը՝ հենվելով աշխատանքի, համերաշխության և փոխադարձ հարգանքի վրա:

Թող այս տոնը լինի միասնության, շնորհակալության և նոր ոգևորության օր:

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, խաղաղություն, բարեկեցություն, թող ձեր տները լցված լինեն ջերմությամբ, իսկ Ալվանք բնակավայրը՝ շարունակական աճով ու ստեղծարարությամբ: